



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ ԺԱ. — ՇՐՋԱՆ ԺԹ. 1886 ՏԱՐԻ ԺԹ. ՆՈՅԵՄԲԵՐ 30

ԿՐՕՆԱԿԱՆ

ՄԵՌՆԵԼՆ ԻՆՁ ՇԱՆՀ Է:

Ա. ԿՐԶԷ. 15. 31:

Յոյալ վերայ երերուն նաւակի մէջ նստած, տատանուելով
դէպի իմ հայրենի երկիրս եմ գնում. տալիս կատապի ալիքներ
են, որ ինձ ուզում են կուլ տալ, գլխիս վրան՝ փոթորիկի զար-
հուրանքը: Հարուած հարուածի ետեւից գալով, նաւակիս տախ-
տակներին խփուելով, ինձ մահ են սպառնում:

Թող իմ նաւակս մրրկից ու ալեկոծութիւնից խորտակուի ու
տախտակները փշրուին, էլի չեմ վախենալ. միայն իմ հաւատա
շխուհանայ: Աստուած այս ամեն զարհուրելի ալիքների միջովն
ինձ անց կը կացնի, կը տանի դէպի իմ ցանկալի նպատակս, դէպի
այն փափագելի տեղն, որ իմ հայրենիքս է, այն տեղն, որ ինձ
հրաւեր է կարգում թէ՛ արի, ու ինձ պէտք ընդունի երկրասոր
կեանքիս կարճատեւ ընթացքից յետոյ:



Այս մարդկային մարմինն՝ որ ունիմք այս աշխարհումս մեր հոգւոյ մի Ռաֆայէլէ փոքր է Բեայն: Աւրիշ կերպ ամենն ինչ ենք կարող երևակայել ու հասկանալ մեր մարմինը՝ մեր հոգւոյ վերաբերութեամբ: Ինչու որ մեր այդպիսի գաղափար ունենալը մեր մարմնոյ ու հոգւոյ վերայ՝ նոյնչափ ճշմարիտ է ըստ ինքեան, որչափ որ շատ ու շատ մեծակշիռ հետեւութիւններ ունի մեր կենաց համար:

Աստուածութիւնը կամեցել է, որ մեր հոգին չհոգեւորի, այս ինքն՝ մեր մարմնոյ հետ էլ կապակցած լինի: սորա համար պարփակել է մեր հոգին մի երկրաւոր նիւթի մէջ, որոյ ամենայն մասերը նորանով են կենդանութիւն ստանում: Զգերի ամենաքնքոյշ և գրեթէ աննշմարելի ցանցի միջոցաւ, որ մարդուս բոլոր մարմնոյ մէջն է տարածուած, հոգին իւր իշխանութիւնն ու զօրութիւնն ունի նորա վերայ: Հոգին՝ մարմնոյ միջոցաւ՝ զրոյց տպաւորութիւններ է ստանում ու ստորումէ մարմինն իբրեւ գործիք բանեցնել արտաքին աշխարհի գէմ: Երբ որ այս գործին կոտրւումէ փշանում ու էլ բանի պէտք չի գալի, հոգին էլ նորա մէջը գաղաւթումէ իշխելուց ու զօրութիւն ունենալուց: Խանգարուած մարմինն՝ իւր խանգարուելովը՝ հոգւոյ համար այնպիսի մի օտար բան է դառնում, ինչպէս որ ուրիշ ամենայն երկրաւոր բանը: Մարմնոյ այսպէս օտար բան դառնալն, կամ օտարանալն հոգւոյ՝ ասումէ Բեա՞ էլ:

Մարմնը Բե Ռաֆայէլէ փոքր է Բե Էփօն: Մեր ամեն շարժմանց մէջ՝ թէ՛ մեր քնած և թէ՛ գարթուն ժամանակն, որ գործ չենք կատարում, կամ կատարումներ, մարմնոյ երեւոյթներից, արտայայտութիւններից հասկանում ենք, որ մեր մէջը հոգի կայ, որով կենդանութիւն ունինք: Մարմինը չէ, որ բարկանումէ՝ կամ սիրում, այլ հոգին է, որ շրթունքների շարժմունքովը՝ մեզ իւր մասին իմացնումէ, աչքի նայուածքովը՝ ժպտումէ, ամօթն՝ այտերի կարմրելովն է յայտնի անում, իւր շարժմունքներովն՝ ցոյց տալիս իւր աներկիւզ սիրտը, կամ իւր վեհերոտութիւնն, իւր բաղձանքն՝ կամ իւր ցաւն: Երբ որ հոգին իւր քնքոյշ ու շարժուն ծածկոյթիցը՝ կամ պատեանիցն, որոյ անունը մարմին ենք ասում, բոժանւումէ, էլ ի՞նչ է մնում: Բոլորովին մի տեղ ընկած մնումէ մարմինը՝ դէն քցած հագուստի նման: Այնուհետեւ մեր մարմինն մեր աչքի առաջը երևումէ իբրեւ մի մարմարեայ արձան:

ու գրեթէ խելքից գոյրս բան է երևում մեզ, որ այդ անկենդան հողը մի ժամանակ կենդանութիւն ունեցած լինի մի բարձր էակից:

Աւստի ապէս սիրում ենք, կամ ատում ուրիշների մէջն՝ ոչ իր քէք մարմինն, այլ հոգին, որ այս քողի տակիցն երևում է: Նորա գրաւիչ լինելն է, որ մեզ հիացնում է. Նորա իմաստութիւնն է, Նորա աստքիւթիւնն, որ մեզ վերայ ազդում է ու մեր մէջը յարգանքի զգացմունք յառաջ բերում: Նորա՝ փշաջած լինելն է, որ մեր զղումներն է յառաջացնում: Բայց անկենդան գիտելի առաջ զազարում է ամենայն սէր, ամենայն ատելութիւն, ինչու որ մեր բարեկամը՝ կամ թշնամին անհեապցած է, նորա՝ դէն քցած հողի հագուստը՝ կամ հողային պատեանը նոյնչափ չէ գրաւում մեզ, որչափ որ ամեն ուրիշ հողակոշտը:

Նոյնպէս բնական է, որ ամեն մի մարդ, թէև ուրիշների մէջը նոյա հոգին է սիրում, իւր համար աւելի գերազանց է համարում իւր մարմինը: Նա աշխատում է այդ իւր մարմինը պահպանելու, կատարելագործելու, ինչու որ հոգին ցանկանում է մի ազնիւ, ընդունակ ու յարմարաւոր գործիք ունենալ. նա աշխատում է նորան զարդարելու, ինչու որ հոգւոյ ներքին ցանկութիւնը գերազանց լինելու համար ահամայ հոգս է անել տալիս նորան այն բանի համար, ինչ որ առաջ իւրն է: Մինչև անգամ ջանք է անում, զգալով իւր անարժանութիւնն, այն, ինչ որ ներքին արժանաւորութեան կողմանէ իրան պակասում է, գեղեցկութիւնով զրոյց ծածկելու. աշխատում է քողի ծալքերն աւելի լաւ մին մինի վերայ բերելու, որ մարդ այդ լաւ ծածկուած քողի տակից չկարողանայ տեսնել հոգին իսկ այնպէս, ինչպէս որ է իրօք:

Մեր երկրաւոր լաւ վիճակի մէջ լինելու համար էլ՝ մեր ունեցած հոգն Աստուածանից՝ իրանից մեր մէջը դրած մի կարիք է: Սորանիցն է յառաջ գալի հոգւոյ սաստիկ սէրը դէպի իւր մարմինը, սորանիցն է յառաջ գալի գրեթէ անյաղթելի կերպով սրտով մեր կրած լինելն այն բանին, ինչ որ կէտէ ենք անուանում:

Մարդկային մարմնոյ անշնչացած գիտելից ինչ է դառնում մահուանից յետոյ: Աստուծոյ արարածների միջից կորչում, անհետանում է: Այն էլի խառնվում է հողի հետ, որից որ գոյացած էր: Նա ստեղծուած արարածոց մէջ անկորուստ է մնում և ուրիշ նշանակութիւն է ստանում, ուրիշ վիճակի մէջ լինում, ուրիշ

բաների պէտք գալիս, իսկ հոգին ինչ է լինում. Աստուծոյ արարածների միջիցը կորչում, անհետանում է: Այ երբէք: Ի՞նչպէս կոչնչանար, կանհետանար մարդուս ամենազինիւ մասն, երբոր նորա անազնիւ մասը չէ կարող ոչնչանալ: Միթէ մենք կարող ենք հաւատալ, որ մեր հոգին Աստուծոյ մշանջենաւոր արարածների միջիցը գուրս եկաւ, անյայտացաւ, կորաւ նորա համար, որ իւր քողը դէն քցելոյ որով մենք կարողանումէինք իմանալ զգալապէս նորա ներկայութիւնը: Նա չէ մեռած այլ ապրումէ. ինչու որ հող զարձած մարմինն էլ ապրումէ գեռ: Նորա կեանքը չէ վերջացել, այլ ապրումէ, որովհետեւ Աստուած ստեղծող է, ոչ թէ ոչնչացնող:

Եւ միթէ մեր հնացող, անպէտքացող և հետեւաբար անցաւոր քողը վրաներիցս դէն քցելն այնչափ ցաւ պիտի տայ մեզ: — Թէեւ մեր ունեցած քնական հակումն՝ ապրելու՝ կարող է ահ քցել մեր սիրտն, որ մենք բաժանվումենք մեր մարմնոյ ծածկոյթից. բայց մարդուս հոգւոյ զօրութիւնը կարող է մեր քնութեան երկիւղին անգամ յաղթել: Արքան ազնիւ մարդիկ ուրախ սրտով մահուան առաջն են գնացել՝ Աստուծոյ, հայրենեաց, հաւատոյ ու սերտ բարեկամաց սիրոյն համար: Նոքա մահուան արհաւիրքը չեն զգացել: Աւ որքան մարդիկ յուսահատութիւնից յօժար կամքով վերջացրել են իրանց կեանքը, որ իրանց համար մի անտանելի ծանր բեռն էր գարձել:

Կենդանի մարդը ձեւանալ գիտէ ու ցոյց տալ իրան այն, ինչ որ չէ իսկապէս. բայց որ մեռաւ, էլ այդ բանը չկայ. մեռելները ձեւանալ չունին ու այլ ևս չեն կեղծում. նորանց կերպարանքի գծազրութեան մէջ մարդ տեսնումէ ու հասկանում սովորաբար նոցա հոգւոյ զգացմունքները: Մինչև անգամ պէտք էր մարդ հաւատար, որ կեանքի վերջին րոպէսումն էլ, որոյ մէջ հոգին իւր պատեանից բաժանվում է, մի տխրոժ ու ցանկալի զգացմունք է արտայայտում: Ինչու որ, ուշադրութեան արժանի է, որ այն մարդիկն, որոնք որ մի ծանր հիւանդութիւնիցն են մեռել, վերջին րոպէսումն իրանց երեսի վերայ ցոյց են տալիս իրանց գոհ ու հանգիստ լինելն, ու զիսկ զարձած ժամանակն էլ մասամբ երեւում է նոցա կերպարանքի վերայ մի քաղցր ժպիտ, որով հոգին մարմնուց բաժանուելու միջոցին՝ կարծես ասում լինէր թէ՛ « ի, ինչպէս լաւ է այժմ ինչ համար:

Այսպէս նոքա միայն, որոնք որ իրանց մարմինը չափից գուրս են

սիրում ու դող է րնկնում վրաներն, երբոր մտածում են, թէ իրանց մարմինը հողի տակ պէտք է փախի նոքա միայն իրանց երեւակայութիւնով մահն աւելի զարհուրելի բան են համարում, քան թէ իրօք է: Նոքա իրանց թիւր զգացմունքովը բոլորովին իրանք իրանց խաբում են, երեւակայելով թէ՛ հողի կտոր դարցած իրենց անշունչ մարմինը՝ կտրող է հողի տակը գեռ զգալ իւր դրութիւնը, կամ ինչ վիճակի մէջ լինելը, մինչդեռ մարդուս մէջ զգացողութիւն ունեցող մասն շտապել, գիմել է անյոտեղ, ուր որ աւելի գեղեցիկ վիճակների մէջ պիտի լինի, և անշունչ դիտկն, այս գէն քցած քողն, ինքն իրան ուրիշ բան չէ, ի՞նչ որ անզգայ հող:

Նոյնպէս կարող է ցաւ պատճառել մեզ՝ մեր սովորական կեանքի հանդամանքներից բոլորովին կտրուիլը, մինչև հիմա ունեցած մեր ուրախութիւններից զրկուելը, մեր սրտին սիրելի զաւակներից բաժանուելն ու նոցա թողնելը: Բայց այդ ժամանակ մեր սրտին ցաւ տուողը ըստ ինքեան մահը չէ, այլ այն, ինչ որ պէտք է թողնենք, ինչից որ պէտք է բաժանուենք, կամ զրկուենք: Մեզ տխրեցնողը՝ սաստիկ կերպով մեր սրտով կտած լինելն է երկրաւորին, որ մեզ մի որոշ ժամանակ միայն ունենալու համար է տուած և ոչ թէ իբրև մի մնայուն սեպհականութիւն, որ մեզանից երբէք դուրս գալու չէ: Այն մեր բարեկամաց վերայ որպէս և մեր երկրաւոր բարեկենդիկ վերայ մեր ունցած չափազանց սէրն էլ կարող է սխալ լինել: Մի՞թէ Աստուած ուշ պէտք է դնի, դարձնի մեր հաճոյքին ու փոխի իւր վսեմ ծրագիրներն, որ մեր իսկ բարոյն համար է: Մահուան ժամին մեր միմեանցից բաժանուելը մի՞թէ ուրիշ բան է, քան թէ՛ քնելու գնալու ժամանակը՝ բարի գիշեր ասել:

Արդարև ամենից աւելի զարհուրելի է մահը նոցա համար, որոնք որ այս աշխարհումս իրանց անմահ հոգին անխնամ են թողել և ամենեւին հոգս չանելով ապագայ կեանքի համար միւս աշխարհումը, միայն ապրել են իրանց մարմնոյ հեշտասիրութեան համար, որոնք որ իրանց նման մարդոց ճնշել են, նեղել, խտրել որ աշխարհիս վերայ աւելի երեւելի լինին, աւելի փող ու շահ ունենան, աւելի լաւ ապրեն, որոնց ծիծաղելի բան է երևել՝ իրանց զգայական ցանկութիւնների վերայ ոյժ բանեցնելն, որ իրանց հոգւոյ ոյժը բարձրացնեն, որոնք որ յիմար բանեն համարել՝ երկ-

կրաւոր վայելչութիւններէց իրանց զրկելով՝ առաքինի լինել. որոնք որ դատարի ու անխելք բան են համարել ուրիշների համար բարի բան անելն. որովհետեւ փոխարէն շնորհակալութիւն չեն ստանում, կամ թէ մեզանից զոհողութիւններ էլ են պահանջում:

Արդ՝ երբ որ այգալիսի մարգիկը ժամանակաւորն իրանցից դէն են քցում, որոյ համար էին միայն իրանց ստեղծուած կարծում. երբ որ պէտք է բաժանուեն հողից, որոյ համար էին միայն ապրում, որոյ համար ամեն բանն անում էին՝ — այո՛, նոցա համար մահը զարհուրելի պէտք է լինի. ինչու որ աղքատ, թշուառ, ու անկատար է մնացած նոցա անխնամ թողած հողին և ամեն տեսակ մեղքերով արատաւորուած: Ինչ որ ցանկէլ են, իրանց կեանքումը հնձեցին. միայն իրանց հոգւոյ յաւիտենական կեանք ունենալու համար բան չէին ցանկէլ:

Արդէն յանցաւոր մարդն իւր կատարելապէս առողջ փիճակի մէջ շատ անգամ յանկարծ կորմբումէ իւր անպիտանութիւնից: Իւր գործ կատարելու միջոցին ինքն իւր վերայ բարկանումէ, ինքն իրան նախատում, պիտարակում իւր սրտի մէջն, տեսլով թէ՛ դու քո արածիդ համար ոչ Աստուծոյ և ոչ մարդոց առաջը կարող ես պատասխան տալ: Բայց՝ խլանալու, տալելու նման՝ իւր հոգին ընդարմանումէ զգայականութիւնիցն, որի ձեռքն է տուած ամենայն իշխանութիւն և ոյժ: Երբ որ այսպիսի ասղութեան, կամ թմրութեան ինքն իրան տալն այլ ևս կարելի չէ, այլ հոգւոյն մնումէ միայն իւր ցաւալի անպիտանութիւնն, ի՞նչ սարսափելի ու սիրտ ճմլող կերպով է այն ժամանակ հոգին գանգատ անում ինքն իւր վերայ: Ի՞նչ ակնկալութիւն պիտի ունենայ մարդս տապալաւում, երբ որ նա երկրիս հետ աճէ Բան կորցրել է՝ ու յաւիտենական կեանքից էլ «չէնչ» սպասելիք ու յոյս չունի:

Այսպէս չէ աւելի ազնիւ, աւելի իմաստուն հոգին. այսպէս չէ քրիստոնեան, որ հասկանումէ թէ՛ ինչ խոր միտք ունի՝ Յիսուսի մէջ ապրել՝ խօսքն, որ գրումէ սուրբ առաքեալն Պօղոս:

Նորա համար Բնէլը շահ է: Եւ ի՞նչպէս նորա համար կորուստ կլինէր: Նորա համար Քրիստոսի՝ աստուածային մեծ մտածման կերպին նայելով՝ այս երկիրս, կամ իւր տունն, իւր գիւղն, իւր քաղաքն իսկական հայրենիք չէ: Նա գիտէ, որ ծնուել է, ոչ թէ այս հողակոշտի համար, որոյ վերայ պիտի բնակի և իւր երկրաւոր կեանքի պէտքերը հոգայ, այլ Աստուծոյ ընդարձակ և անխա-

ճան թագաւորութեան համար: Նորա համար զլիաւոր բանն այս աշխարհիս կարճատեւ կեանքը չէ, այլ աստուածային բոլոր արարածոց մէջ ունենալու կեանքը: Յախտեալան կեանքը՝ նորա հարական տունն է, Աստուած՝ նորա հայրը, ու իւր նման ստեղծուած ամեն մի հոգի՝ իւր հետ յաւիտեանս եղբայրացած է:

Մեռելիւն, հաշոյ համար ի՞նչ կորուստ կայ որ: Նա փոխումէ միայն մի հագուստ, նա՛ իրան սիրող երկնաւոր Հօրիցը ստանումէ աւելի մի ալնիւ հագուստ՝ պատառոտուածի և այս ու այն հանգամանքներով անգործածելի դարձածի տեղ: Ինքն իրան է մնում, Աստուած իր մէջ է մնում, բոլոր աշխարհս Աստուծոյ ստեղծուածն իրի ամենայն հրաշալիքներովն իրան է մնում: Ի՞նչ է կորցնում՝ նա, այս աշխարհիս վերայ իւր ունեցած բարեկամներին, մտերիմներին և: Չէ, նոքա իւր համար դեռ կան իւր հայրական տան մէջ, որովհետեւ նա դեռ եղբայրացած է ամենի հետ, ինչպէս առաջ, միայն հազորդակցութիւն չէ անում՝ այլ ևս նոցա հետ ինչպէս առաջ, երկրաւոր միջոցներով: Այլնչ չէ կորցնում, ինչ որ Աստուծոյ ձեռքումն է:

Նա, ով որ գիտէ Յեռոնի մէջ ապրել, նորա համար մեռելը միայն շահ է: Իրաւ է, մի քանի ուրախութիւններից զրկվում եմ ես, երկրաւոր կեանքս փոխելով, բայց ազատ ու հեռու եմ մնում քանի վախենալու բաներից, քանի վշտերից ու թշուառութիւններից: Երկրաւոր կեանքս որ փոխեցի, էլ ինձ համար արտասուք թափելու տեղ չկայ այժմ. քաղցր է ազատուած հոգիների վիճակը: Եւ արդեօք այս աշխարհիս կեանքն այնչափ կատարելապէս երջանկաբեր է, որ մարդ ցանկանար յաւիտեան ապրել նորա վերայ: Աւրեմն էլ ինչո՞ւ համար են այնպէս սրտանց փափագում տարիքներն առած մարդիկն, որ իրանց կեանքից լուծուին, հանգստանան, լաւագոյն աշխարհը փոխադրուին: Ասմ ինչո՞ւ համար հազարաւոր ու բիւրաւոր մարդոց մէջը մէկին չես գտնիլ, որ, երբ որ ընտրութիւն անելն իրան թողնէին, էլի նորից իսկ այնպէս չէր սկսիլ իւր կեանքն ու էլի նոյն կերպով չէր ապրել, ինչպէս որ առաջ արդէն ապրել է աշխարհումս: Աւրեմն ի՞նչ կորուստ կարող է լինել մեզ համար, երբ որ վերջապէս այս աշխարհումն ունեցած մեր դրութիւնը վերջանումէ, մեր ունեցած այն դրութիւնն ու վիճակն, որ մեզ այնպէս չէր բազդաւորացրել, որ մենք միշտ և յաւիտեան այդ՝ և ոչ ուրիշ կեանքի ցանկանայինք: Մի նոր

կեանք, հոգիների համար մի լաւագոյն կեանք, որ հաստատուն յաւսով պիտի կարողանային փայլելի, շահ չէ՞ արդեօք: Աւ ի՞նչ են մահաւան արհաւիրքն: Երեկոյական երկչոտ երեւակայութեան երկիւղը միայն: Այլ հոգի, Աստուած՝ որ քո մարմնոյ հագուստդ վրայիցդ հանել է սալի, աւելի փառաւոր կերպով քեզ կոպտի լաւագոյն աշխարհի պայծառութեամբն:

Այլ որ գէթէ Քրիստոսէ մէջ ապրէլ, նա գէթէ ուրախութեամբ նորա հետ մեռնէլ էլ: «Արդարն ամեն օր մեռնումէ», խորհրդաւոր կերպով ասումէ սուրբ առաքեալն Պօղոս: Նա ամեն անգամ մեռնումէ, երբ որ իւր մտքերովը բարձրանումէ գէպի Աստուած՝ ու երկրաւորը մոռանում: Նա ամեն անգամ մեռնումէ, երբ որ հոգւովն խօսակցումէ այս աշխարհիցս հեռացած իւր սիրելիների հոգիների հետ ու նորանց մօտ է: Արտիճեալն այն միջոցին, այդպիսի մի սուրբ բոլակում՝ աշխարհս նորա համար ոչինչ է: Նա Աստուծոյ մօտն է, նա իւր սիրելիների մօտն է: Նորա սիրտը վրկայումէ, թէ ինչ կլինի նա, երբ որ իւր հոգին իւր երկրաւոր քողը վրայիցը հանի. նա արդէն զգումէ, թէ ե ոչ այն կատարելութեամբն, յորում հաւատը երանելի տեսութեան է փոխում:

Ահա ինչ լաւ է: Ինչո՞ւ համար եմ ասորում ես այս աշխարհիս վերայ: Թէ բոլոր մարդոց վիճակն եւ թէ բոլոր աշխարհս ինձ ստիբեցնումէ, որ ես ասորում եմ յաւիտեան կենաց համար: Մի աւելի լաւագոյն, մի աւելի կատարեալ կեանքն է իմ փափագս, որին ցանկանումէ իմ անձս: Գորա համար աշխատում եմ ինձ ազնուացնելու. գորա համար ջանք եմ անում ես, որ հոգիս ունենայ ամեն մի առաքինութեան կատարելութիւնը. ինչ որ ես Յիսուսի Քրիստոսի ձեռքովն ու հեռուելոյն նորան ու իւր աստուածային իմաստութեանն, պատերազմելով ձեռք եմ բերում, այն ստանում եմ եւ այնտեղ իրեւ սուրբ պոսակ յաղթութեան: Այսպէս ուրեմն մահն է, որ ինձ տանում, հասցնում է իմ բաղձալի նպատակիս: Մահո՞ւմն է, որ ես համոռն եմ այն բանին, ինչին որ հասնել երբեք չէի կարող իմ երկրաւոր աւելի երկար կեանք ունենալովս:

Ահա ինչ լաւ է: Հոգիս ինչո՞ւ պիտի ահ ու գողի մէջ ընկնի այն անձանօթ փաղոցիցն, որով պէտք է գնայ: Արժէ այս աշխարհումն ճանապարհն աւելի ծանօթ է, որ նա պիտի գնայ: Իմ կեանքիս հէնց այս ժամն, որ ապրում եմ, միթէ ծածկուած չէ

անթափանցելի մութով։ Մի թէ գիտեմ ես, թէ ինչ կատարահի
լինձ հէնց այդ ժամումն ու սրտեղ եմ ես գնում։ Եայց էլի առ-
բումեմ ես ու անցկացնում այդ ժամերը։ Եայց այստեղ էլ, ինչ
որ մութն էր ինձ համար, միշտ կամաց կամաց պարզվում է ար-
դէն, իմ ունեցած այն ամեն կասկածանքներէյս յետոյ, որ ա-
ռաջ իմ սիրտս մաշում էին։

Այսպէս էլ, ինչ որ մեզ համար մութ է, կը պարզուի այն ժա-
մումն, որ կը գայ անմիջապէս մեր մահից յետոյ։ Անճանօթ փո-
ղոցն՝ ինձ ծանօթ կ'լինի, հէնց որ ռոտ կ'զնեմ։ Ի՞նչպէս կարող
էի ես այդ փողոցի առաջը զողալ։ Նոյն ճանապարհն է, որով
գնացին իմ սիրելիներէյր նախ, որով ինձանից առաջ մեռան։
Ինչո՞ւ համար մեծ ուրախութեամբ չպիտի երթայի՝ իմ սրտիս
համար միշտ թանկագին՝ այդ հոգիների ետեւից։ Ախ, կարելի է
արդէն այն գեղեցիկ բողբոսումն, երբ որ երկրոստ քաղն իմ հոգ-
ւոյս վրայից կընկնի, ես դարձեալ կճանաչեմ այն սիրելիներին,
որոնց որ ինձանից այնչափ հեռու էի կարծում, և այն ժամա-
նակ կ'ամանամ, որ նոքա ինձ միշտ աւելի մօտիկ են եղել, քան
թէ ես կարծում էի իմ սահմանաւոր փիճակիս մէջը։

Մէռելն յերա՞նք է։ Արովհետեւ սուրբ մերձաւոր կերպով
միանալ է հոգիների շօր հետ, միանալ է այն կատարելոց հետ,
որոնց իմ հոգիս միշտ յուզուած ցանկութեամբ փափագում է,
միանալ նոցա՝ հետ, որոց համար այսօր էլ իմ վերաւորումը սր-
տիցս արիւն է գնում, աչքիցս՝ արտասուք չէ պակասում։ Ձեզ
կրկին գտնել, ձեզ կրկին ունենալ, ձեզ կրկին սիրել, ո՞վ իմ
հոգւոյս սիրելիներ, որոնց որ Աստուծոյ ձեռքն՝ ստեղծելովն իմ
առաջն բերեց ու ինձ հետ միացրեց, նորից գտնել ձեզ, յաւի-
տեան միանալ ձեզ հետ, իմ հոգւոյս սիրելի՝ պայծառացած հո-
գիներ, ո՞հ, ինչ մեծ ուրախութիւն կայ այս յիշատակի մէջը։
Աստուած սուեց ձեզ ինձ. Աստուած, գերագոյն սէրը, սուեց
մեզ այս սէրն, որ ոչ մի մահ չի կտրել միմեանցից և՛ մի անե-
րեւոյթ կապի նման՝ մահկանացու մարդուն կապում է լաւագոյն
աշխարհի բնակչաց հետ։ Աստուած չի ոչնչացնում սուրբ բանը,
և սէրը՝ այն շատ սուրբ կապն է, որ հոգիներին կարող է փոխա-
դարձաբար երջանիկ անել։

Մէռելն ի՞նչ է։ Այո, այս լինի մի օր իմ վերջն հառաչոյս
մահուան անկողնիքիս մէջ ու իմ մաաժմունքս Ստեղծողիս սիրոյն

վերայ, իմ սիրելիներին վերայ՝ թող լինի հոգւոյս վերջին մտածմունքը, նորա քողն իւր վրայից ընկնելուց առաջ: Երբ որ այդ քողը ցած ընկու, հոգիս կը ճախրի արդէն այս աշխարհիցս գէտի կենդանեաց ու կատարելոց երկիրն:

Եւ սորա համար, ո՞վ Փրկիչ իմ՝ Յիսուս Քրիստոս, Գու եղի՞ր իմ կեանքս, որովհետեւ առանց քեզ մեռնելա իմ հոգւոյս անյոյս կորուստը կլինէր: Ես ուզումեմ Ք* մարտիկ մտածել, Ք* ատուածային ուսման ճանապարհովը գնալ, Ք* վսեմ կերպովդ մտիկ տալ աշխարհային բանի վերայ, Ք* սիրովդ մարդոց սիրել, Ք* հռանդովդ ամեն տեղ երջանկութիւն տարածել, Ք* սրտովդ յայթել եմ առաքինութեանս ամեն մի արգելքին, Ք* համբերութեամբդ տանել աշխարհիս նեղութիւնն, Ք* խմստութեամբդ կեանքի ուրախութիւնները վայելել, Ք* հաւատովդ՝ լիապատար վստահութեամբ նախախնամութեան ճանապարհները մտնել ու Ք* աչքովդ յաւիտենական կեանքի վերայ մտիկ տալ՝ իրբեւ իմ հօրս տան վերայ, և Սաեւծող Աստուծոս՝ իրբեւ իմ հօրս վերայ:

Քրիստոս լինի իմ կեանքս և մեռնելն՝ իմ շահս:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

ԱԹՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

(Շրջանի. Արք. 1886 թ. Ժ.)

Գ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՂԵՂԵՅԻ

Բաղձալով կարեւորը համառօտակի ներկայել եւ ընդարձակ պատճառաբանութեանց մէջ չմտնել, մեր Ս. եկեղեցւոյն վրայ քանի մի սկզբնական և հիմնական կէտերը քաղուածոյ սճով յառաջ կը բերեմք:

Հայոց եկեղեցին առաքելական է և առաքելական աթոռ ունի առաքելոց ժամանակէն, Արքեպիսկոպոսի և Բարդուղիմէոսի քարոզութեամբ լուսաւորեալ և իշխանութեամբ հաստատեալ և մարտիրոսական մահուամբ կնքեալ: Աոյն աթոռը բաւական ժամանակ տեւելով, ըստ մեզ՝ Շաւարշանայ աթոռոյն մէջ, երրորդ դարուն կէսերը ընդհատեցաւ և կէս դար յետոյ չորրորդ դարուն ճիշտ սկիզբը վերանորոգեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքը: